Երու[ա]նդաշատ[1] *քաղաք[ա]գեղի*[2]՝ *իջանէ յԵրասխ։* 179 *Եւ Արած[ա]նի*[3] *զսկիզբն ունի ի Ծաղկոտնէ, ի տեղ[ւ]ոջէն*[4], *որ կոչի Ոսկիք, եւ գնալով ընդ հիւսի՛սի*[5], *պատելո[վ] զՆ՚պատական*[6] *լերամբն առ Բագ[ա]ւան*[7] *գեղ[ւ]ոջն*[8]՝ *խառնի ի Բագրեւան գետ։* 180 *Եւ Երասխ թողլով զԱրմաւիր*[9] *քաղաք ի հիւսի՛սի*[10] *եւ զԱրագածոտ[ն]*[11], *յորմէ բղխեն աղբիւրք Մեծամաւր գետո[յ], եւ զինքն զԱրագած*[12], [27բ] *եւ է ըստ ելից*[13] *Նիգ, յորմէ բղխեն աղբիւրք Քասախ*[14] *գետո[յ], [թողու ի հարաւոյ զՃակատս եւ զՄասեացոտն գաւառ. եւ ըստ ելից Որկով*[ֆ] *գետոյ]*[15] *զինքն իս[կ]*[16] *լե՚ռնագագաթ*[17] *Մասիս ի հարաւ թողու Երասխ, որո[յ]*[18] *թիկանց տարածեալ՝ Կոգովիտ գաւառ։* 181 *Եւ անցանէ ՝Երասխ*[19] *յելից կուսէ Վաղարշապատ քաղաքի, յորում՝ մայր եկեղեցեաց Կաթողիկէ*[20] *եւ մարտիրոսուհ[ե]ացն*[21] *մատրունքն, յորոց յելից բղխեն աղբիւրք Ասպահեն գետո[յ], որ է Խաւզմաւր*[22], *եւ խառնի ի Մեծամաւր։* 182 *[Եւ ապա յելից Նորա են գաւառք Մազազ եւ Կոտայք եւ Վարաժնունիք, ընդ որոց հոսի գետն Հուրազդան՝ բղխեալ ի ծովէ Գեղարքունւոյ*[ֆ]*, եւ խառնի ի Մեծամաւր]*[23]։ 183 *Եւ ապա յելից Նորա՝ գետն Ազատ*[24], *եւ արդարեւ՝ ազատ, որո[յ] ակունքն բ[ղ]-*

---

1 *V* Երուանդաշատ *փխ* Երուանդաշատ *(վեր. Սուքր.)*

2 *V* թգի՞, *S* քաղաքի *փխ* քաղաք[ա]գեղի *(վեր.՝ ընկալելով* **թ***-ն իբրեւ «քաղաք» գաղափարագիր, եւ* **գի***-ն իբրեւ սեռ. «գեղի» (ուղղ.՝* գեղ), *որի կանոնաւորն է՝* գեղջ, *բայց տե՛ս 4 տող անց՝* գեղ[ւ]ոջն *(եւ Ե.94, 105, 106՝* գեղաքաղաք)՝ *փխն.* *գեաւղջ. կրկնաբութերով, գուցէ, ձշուել է կապող* **ա***-ն)*

3 *V* Արածնի *փխ* Արածանի *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Ե.126, 135, 140, 220 եւն)*

4 *V* տեղոջէն *փխ* տեղւոջէն *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

5 *VS* հիւսիւսի *փխ* հիւսիսի *(վեր.՝ ըստ այլոց)*

6 *V* պատելո՞ զՆապատական *փխ* պատելով զՆպատական *(վեր. Սուքրեանի)*

7 *VS* Բագաւան *փխ* Բագ[ա]ւան *(վեր., գուցէ եւ՝ վերլի է այլուր չհանդիպող* Բագ[ո]ւան *տարբերակ)*

8 *V* գեղոջն *փխ* գեղւոջն *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

9 *V* զԱրմաբիր *փխ* զԱրմաւիր *(վեր. Սուքրեանի. տե՛ս ուշ երկաթագիր* **Ի** → **Բ***)*

10 *VS* հիւսիւսի *փխ* հիւսիսի *(վեր.՝ ըստ այլոց)*

11 *V* զԱրագածոտ *փխ* զԱրագածոտն *(վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի. հմմտ. այլուր՝* **-ոտն***)*

12 *Այստեղ է V-ի գրիչը դադարեցրել Այրարատ գլխի արտագրումը եւ սկսել ընդօրինակել վերը բաց թողած Գուգարքի ու Տայքի գլուխները (հմմտ. նախ. Ե.168-ի ծնթ.). Տայքի աւարտին յաջորդող բնագիրը փոքրատառերով է եւ առանց որեւէ նշման («և նշո՞շ. և է. ըստ ելից Նիգ»). բաժանման տեղում լոկ մի ուշ (թերեւս՝ ԺԹ դարի), կապոյտ մատիտով գիծ է քաշուած. Սուքրեանն այս ամենը, ցաւօք, չի ծանօթագրել*

13 *S* յելից *փխ* ելից *(V. տե՛ս նախ. Ե.124 եւ 174-ի ծնթ.)*

14 *V* Քարախ, *S* Քարսախ *փխ* Քասախ *(վեր., այս բառի* **ր***-ի վերեւում ու ներքեւում ուշ ձեռագրով դրուած են կայծակնաձեւ նշաններ եւ վերեւինի կողքին տրուած է սրբագրում՝* **սա**, *իսկ* **ք***-ի վերեւում նոյն ձեռքը նկարել է կէտախաչանշան եւ լուսանցքում նոյնպիսի «աստղանիշի» կողքին 2 տողով «ծանօթագրել»*. «կարբոյ / ջուրն է»*)*

15 *VS չիք* թողու ի հարաւոյ ... գետոյ *(2 տող) (պայմանական վեր.՝ ըստ համառօտի պահպանած գաւառանունների (տե՛ս նախ. Ե.178-ի ծնթ.) եւ յարող կտորների. տե՛ս* **գետոյ ... գետոյ**. Որկով *գետանունը զուտ վարկածային է)*

16 *V* իս *փխ* իսկ *(վեր. Սուքրեանի)*

17 *VS* լեառնագագաթ *փխ* լե՚ռնագագաթ *(վեր.՝ ըստ այլոց. տե՛ս Բ.9, 24, 29, Գ.58, Դ.23, Ե.78 եւն)*

18 *S* յորոյ *փխ* որո[յ] *(V)*

19 *V* յԵրասխ *փխ* Երասխ *(վեր. Սուքրեանի՝ ըստ բազմաթիւ այլոց)*

20 *V* կաթօղիկէ *փխ* Կաթողիկէ *(վեր. Սուքրեանի. հմմտ. բանաւոր* **Ո ... Օ**. *համառօտում այս նշման պճնազարդ տարբերակը տարուած է գլխի վերջ՝* «եւ զմայր եկեղեցեացն ի թագաւորաբնակ եւ յարքայանիստ Վաղարշապատ քաղաքի»*)*

21 *V* մարտիրոսուհացն *փխ* մարտիրոսուհ[ե]ացն *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. օր.՝ 2 բառ առաջ կայ* եկեղեցեաց*)*

22 *Սուքրեանի տողատակն է.* «Գետս այս երկանուն ոչ միայն ոչ յիշի այլուր, այլ եւ չերեւի իսկ արդ, բայց եթէ աննշան վտակ մի իցէ Մեծամօրի»

23 *VS չիք* Եւ ապա յելից ... ի Մեծամաւր *(4 տող) (պայմանական վեր.՝ ըստ համառօտի, որի գաւառների թուարկումն է՝* «Նիգ, Կոտայք, Մազազ, Վարաժնունիք (*AE* Մաղաղ, Վարժնունիք), Ոստանն Դունայ (*DPv* Դընանայ)», *ինչպէս նաեւ յարող նախադասութիւնների. տե՛ս* **ի Մեծամաւր ... ի Մեծամաւր**. *ի դէպ, համառօտը չունի յաջորդող* Ուրծաձոր *եւ* Արածոյ կողմն *գաւառները)*

24 *Սկզբնատառ* **ա***-ի վրայ ուշ ձեռագրով նկարուած է կէտախաչանշան եւ լուսանցքում նոյնպիսի նշանի տակ 2 տողով «ծանօթագրուած» է.* «գառնու / ջուրն է»